ՀՈԴՎԱԾՆԵՐ

ՌԿ(բ)Կ ԴԻԼԻՋԱՆԻ ԴԱՎԱՌԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Վ. Ն. ՆԵՐԿԱՐԱՐՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

Հայաստանում բոլշևիկյան աշխատանքն առանձնապես ուժեղացավ 1919 թ., երբ ՌԿ(բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեն զգալի թվով կուսակցական աշխատողներ ուղարկեց այստեղ, որոնց օգնությամբ վերակառուցվեց կուսակցական կազմակերպությունների գործունեությունը։ Սեպտեմբերին տեղի ունեցավ Հայաստանի բոլշևիկների խորհրդակցությունը, որտեղ ընտրվեց ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտե (Արմենկոմ)։

Արմենկոմի ղեկավարությամբ ամենուրեք վերակառուցվեց կոմունիստական բջիջների աշխատանքը, ստեղծվեցին նոր կոմբջիջներ, աշխուժացավ բոլշևիկների գործունեությունը։

1920 թ. Հայաստանում նոր թափ ստացավ սովետական իշխանության համար մղվող պայքարը։ Դրան նպաստեցին դաշնակցականների ու նրանց տերերի՝ անգլո-ամերիկյան իմպերիալիստների հակաժողովրդական քաղաքականությունը և քաղաքացիական պատերազմի ռազմաճակատներում վերջիններիս դեմ կարմիր բանակի տարած փայլուն հաղթանակները։

Այդ տեսակետից կարևոր դեր խաղաց նաև Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների առաջին կոնֆերանսը, որը տեղի ունեցավ 1920 թ. հունվարին, Երևանում։ Տալով Անդրկովկասում և Հայաստանում ստեղծված իրադրության ճիշտ բնութագիրը, ընդգծելով Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության և կարմիր բանակի փայլուն հաղթանակների պատմական նշանակությունը, կոնֆերանսը դաշնակցականների ռեժիմը զինված ապստամբության միջոցով տապալելու դիրքորոշում ընդունեց։

Կոնֆերանսը տեղական կազմակերպություններին հանձնարարեց աշխատանքը վերակառուցել նոր իրադրության համապատասխան, անհրաժեշտ գործունեություն ծավալելով բանվորների, գյուղացիների, զինվորների և ողջ աշխատավորության շրջանում։

Հայաստանի բոլշևիկների հունվարյան կոնֆերանսի որոշումները կենսագործելու նշանաբանով լայն աշխատանք կատարվեց հանրապետության բոլոր գավառներում, կարճ ժամանակում ավելացավ կոմբջիջների ու կոմունիստների թիվը։ Ուժեղացան բանվորների, գյուղացիների, զինվորների հեղափոխական ելույթները։ Հրատարակվեցին բոլշևիկյան «Պահակ», «Ալիք», «Կոմունիստ», «Գյուղացու ձայն», «Լոռվա գյուղացիության ձայն» և այլ թերթերը, տեղի ունեցան բոլշևիկների գավառային կոնֆերանսներ ու կոմբջիջների բազմաթիվ ժողովներ։ Կուսակցական գավառային, քաղաքային կազմակերպությունների

աշխատանքը գլխավորելու համար տեղերն ուղարկվեցին ՌԿ(բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեի ու Արմենկոմի ներկայացուցիչներ[1]։

Առանձնապես աշխույժ գործունեություն ծավալեցին Ղազախ-Շամշադինի (Դիլիջանի գավառ) բոլշևիկյան կազմակերպությունները, որոնց աշխատանքը կենտրոնացած էր այն բնակավայրերում, որոնք այժմ մտնում են Դիլիջան քաղաքի, ինչպես նաև Իջևանի, Շամշադինի, Կրասնոսելսկի ու Նոյեմբերյանի շրջանների կազմի մեջ[2]։

Մինչև հեղափոխությունն այստեղ թույլ էր բոլշևիկյան աշխատանքը, գավառի առանձին գյուղերում գործում էին միայնակ կոմունիստներ։ Ղազախ-Շամշադինի կամ Դիլիջանի գավառի մեջ այն ժամանակ մտնում էին այժմյան Դիլիջանը, Իջևանի և Շամշադինի շրջաններն ու Նոյեմբերյանի և Կրասնոսելսկի շրջանների գյուղերի մի զգալի մասը։ Հայաստանի հյուսիսային շրջանների աշխատավորությունը ինչպես միշտ, այնպես էլ դաշնակների տիրապետության ժամանակ մարտական ըմբոստություն էր ցուցաբերում գոյություն ունեցող անարդար կարգերի նկատմամբ և սիստեմատիկորեն արտահայտում էր իր դժգոհությունը։ Այդ մասնավորապես ցայտուն դրսևորվեց դեռ առաջին ռուսական հեղափոխության ժամանակ, երբ հեղափոխական ուժերի ազդեցությամբ Բարանայի (Նոյեմբերյան) շրջանի գյուղացիները մասսայական ելույթներ ունեցան աղալարների ու բեգերի, կալվածատերերի ու ցարական իշխանությունների դեմ։ Այդ ուժերը շրջանի գյուղերից առաջներում Բաքու և այլ քաղաքներ գնացած, իսկ այժմ բանվոր-հեղափոխական դարձած գյուղացիներն էին, որոնք, վերադառնալով իրենց հայրենի գյուղերը, գյուղացիներին պայքարի էին հանում շահագործողների դեմ։ Այդ բանվոր-հեղափոխականներից էր ՌԿ(բ)Կ հնադույն անդամ Դարչո Դաղբաշյանը (Ղալաչա գյուղից), որը առաջին հեղափոխության տարիներին, վերադառնալով աքսորավայրից, Դովեղ գյուղի գյուղացիներին ոտքի հանեց ընդդեմ կալվածատերերի։ Նրա կազմակերպած խմբակի անդամները համարյա բոլորն էլ աքսորվեցին։ Նման աշխատանք էին կատարում քաղաքում բոլշևիկյան գաղափարներով կոփված նաև մյուս շրջանների գյուղացիները։ Միխայլովկայի (Կրասնոսելսկ) շրջանի հեղափոխական շարժումները կապված են Բադրատ Բորյանի անվան հետ։ Ակտիվ էին գործում նաև Դիլիջանի, Իջևանի, Շամշադինի հեղափոխականները։ Այս շրջաններում հեղափոխական աշխատանքն աշխուժացավ Փետրվարյան հեղափոխությունից հետո և լայն ծավալ ստացավ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության ազդեցությամբ[3]։

1917—18 թթ. Բարանայի շրջանում ակտիվ աշխատանք էին տանում Մկրտիչ Շահվերդյանը, Աղասի Խաչիկյանը, Եփրեմ Ասատրյանը, Ալեքսանդր Տեր-Բարսեղյանը, Ավետիք Զալինյանը, Երեմ Մամյանը, Վարդան Ատրյանը և ուրիշները։ Հենց նրանք էլ 1917 թ. հունիսին ստեղծեցին Բարանայի կոմբջիջը։ Կողբի բջիջն ստեղծվեց 1917 թ. վերջերին։ Բոլշևիկների ղեկավարությամբ 1917 թ. շրջանի Կողբ, Ղոշղոթան, Ղալաչա և այլ գյուղերի գյուղացիները բռնագրավեցին կալվածատիրական հողերը։ 1918 թ. կեսերին բոլշևիկների

---

1 Տե՛ս մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի կուսակցական արխիվ, ֆ. 114, ց. 1, գ. 8, թ. 76, 101, 110, 137, գ. 21, թ. 28, 116, ց. 22, թ. 17։

2 Տե՛ս ՄԼԻ-ի ՀՖԿԱ, ֆ. 32, ց. 2, գ. գ. 5, 6, 13, 15, 20, 21, 27, 29, 32, 40, 43, 31, 55, ֆ. 57, գ. 12 և այլն։

3 Տե՛ս «Հին բոլշևիկների հիշողություններ». գիրք երկրորդ, Երևան, 1961, էջ 455—550։

զինված ջոկատը ջախջախեց շրջան ուղարկված դաշնակցական մաուզերիստական պատժիչ արշավախումբը։ 1918—20 թթ. կուսակցական բջիջներ են կազմակերպվում շրջանի Ղոշղոթան, Կոթի, Ղալաչա և բազմաթիվ այլ գյուղերում։ 1920 թ. շրջանի բոլշևիկները մի քանի անգամ հակակառավարական ելույթներ են կազմակերպում, ակտիվ աշխատանք տանում բոլշևիկների համահայաստանյան առաջին (հունվարյան) կոնֆերանսի որոշումների կենսագործման ուղղությամբ։

1917 թ. Փետրվարյան և Հոկտեմբերյան հեղափոխությունների ազդեցությամբ նույնպիսի ակտիվ աշխատանք էին տանում նաև գավառի Միխայլովկայի և մյուս ենթաշրջանների աշխատավորները։ Այստեղ 1917—18 թթ. հեղափոխական բանվորների ու զինվորների ղեկավարությամբ բազմաթիվ գյուղերում հակակառավարական ելույթներ են տեղի ունենում։ 1919 թ. սկզբներին, Ներքին Ճամբարակի և Թթու ջրի գյուղացիները բռնագրավում են կառավարական պահեստները, իսկ նույն թվականի մարտին Միխայլովկայի և Վերին Ճամբարակի գյուղացիները բռնագրավում են պետական ֆոնդի հողերը։ Շրջանի գյուղերում գործող առանձին բոլշևիկներ կարողանում են գաղտնի խմբակներ կազմակերպել, բայց արդեն 1919 թ. կեսերին Ներքին Ճամբարակ և Թթու ջուր գյուղերում ստեղծվում են շրջանի առաջին կոմբջիջները։ Այնուհետև ձևավորվում են Վերին Ճամբարակի, Միխայլովկայի և այլ գյուղերի կոմբջիջները։ ՌԿ(բ)Կ Ներքին Ճամբարակի կազմակերպության անդամներն էին Ստեփան Բորյանը (ականավոր բոլշևիկ հեղափոխականներ Բագրատ, Արմենակ և Խորեն Բորյանների ազգականը), Գևորգ Հարությունյանը, Սաբո Սարիբեկյանը և ուրիշներ։ Վերին Ճամբարակի կուսկազմակերպության անդամներից հիշենք Հովհաննես Հակոբյանին, Ավագ Ստեփանյանին, Սոզոմոն Սարիբեկյանին։ Միխայլովկայի կոմբջիջի անդամներից՝ Իվան Ասատխովին, Տիմոֆեյ Բորոդինին, Յուլիա Պիկալովային, Իվան Սոսինին։ 1920 թ. մարտին տեղի է ունենում շրջանի բոլշևիկյան կազմակերպությունների կոնֆերանսը, որն ընտրում է շրջանային կոմիտե և հանձնարարում վերջինիս կազմակերպել զինված ջոկատ և նախապատրաստվել ապստամբությանը[4]։

Հեղափոխությունից հետո Ռուսաստանից Շամշադին վերադարձած բոլշևիկները ակտիվ աշխատանք էին տանում Ղըբզի, Վերին և Ներքին Կարմիր աղբյուր, Բերդ և այլ գյուղերում։ Առաջին կոմբջիջն այստեղ ստեղծվեց 1918 թ., Ղըբզի գյուղում։ 1919 թ. կոմբջիջներ ստեղծվեցին բազմաթիվ այլ գյուղերում, իսկ մայիսին տեղի ունեցավ բոլշևիկների շրջանային կոնֆերանսը, որն ընտրեց ՌԿ(բ)Կ Շամշադինի շրջկոմ՝ բաղկացած երեք հոգուց (Նիկոլայ Զարգարյան, Արշակ Բաբասյան, Մարտիրոս Ջուլհակյան)։ Շրջանում այդ ժամանակ ակտիվ աշխատանք էին տանում նաև բոլշևիկներ Հովհաննես Գրիգորյանը, Աղաբեկ Շահնազարյանը և ուրիշներ։ Շրջկոմի նախաձեռնությամբ տեղի գյուղացիները հակակառավարական ելույթներ կազմակերպեցին, ձախողեցին դաշնակցական պառլամենտի անդամների ընտրությունը և այլն։ Կուսակցական կազմակերպությունների գործունեությունն է՛լ ավելի ուժեղացավ 1920 թ. սկզբներին։

Նույնպիսի աշխատանք էին տանում նաև Իջևանի շրջանի բոլշևիկները, որոնց հաջողվել էր 1919 թ. ուժեղ կուսակցական բջիջներ ստեղծել Իջևան, Սև

4 Տե՛ս ՄԼԻ-ի ՀՅԿԱ, ֆ. 97, ց. 1, գ. 1, թթ. 16—20։

քար, Աչաջուր և այլ գյուղերում։ Այստեղ աչքի ընկնող գործունեություն էին ծավալել Աղասի Վարդանյանը, Տիգրան Ղալթախչյանը, Սահակ Միրզոյանը և ուրիշներ։ 1920 թ. նոր կուսակազմակերպություններ ստեղծվեցին Ուզունթալա, Քրգեվան (Ենոքավան) ու այլ գյուղերում և շուտով ավելի աշխուժացավ նրանց գործունեությունը։

Դիլիջանի շրջանում առանձնապես ակտիվ հեղափոխական աշխատանք էր տարվում կայազորի (6-րդ գնդի) զինվորների և բազմազգ աշխատավորության շրջանում՝ բոլշևիկներ Սեդրակ Հակոբջանյանի, Վաղինակ Հովսեփյանի, Վասիլի Ալեքսեևի, Մուշեղ Աղայանի, Ստեփան Ստեփանյանի, Ապոստոլովի և ուրիշների գլխավորությամբ։

1920 թ. սկզբներից ՌԿ(բ)Կ Արմենկոմի հանձնարարությամբ գավառի կուսակցական կազմակերպությունների աշխատանքը գլխավորում էին Շավարշ Ամիրխանյանը, Ենոք Մկրտումյանը, Անանիա Բերբերյանը, Հայկ Յաղուբյանը, Եղիշե Շամախյանը և ուրիշներ։ Նույն ժամանակ այստեղ ձևավորվել էին նաև Հայաստանի կոմերիտական «Սպարտակ» երիտասարդական միության տեղական կազմակերպությունները, որոնք գործում էին կուսակազմակերպությունների հետ սերտորեն համագործակցված։

1920 թ. կոմունիստների ղեկավարությամբ է՛լ ավելի հաճախակի են դառնում գավառի աշխատավորության հակակառավարական ելույթները։ Մեծ չափերի է հասնում դասալքությունը, ուժեղանում են դաշնակցական բանակի զինվորների հեղափոխական տրամադրությունները։

Ուստի, ամենևին էլ պատահական չէ, որ Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների 1920 թ. հունվարյան կոնֆերանսին Դիլիջանի գավառից մասնակցում են զգալի թվով բոլշևիկներ, նրանց թվում՝ Պետրոս Վարդանյանը (Իջևանի շրջան), Եղիշե Շամախյանը (Դիլիջան) և ուրիշներ։ Հենց նրանք էլ առաջինն են գավառի կոմունիստներին հասցնում Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների հունվարյան կոնֆերանսի որոշումները[5]։

1920 թ. ապրիլի 25-ին Իջևանի շրջանի Քրգեվան գյուղում տեղի է ունենում ՌԿ(բ)Կ Դիլիջանի գավառային առաջին կոնֆերանսը, որը կարևորագույն իրադարձություն էր Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների կյանքում։ Կոնֆերանսին մասնակցում էին գավառի ավելի քան 350 կոմունիստների ներկայացուցիչները՝ 20 պատվիրակներ։ Կենտրոնական հարցը դարձյալ Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների 1920 թ. հունվարյան կոնֆերանսի արդյունքների քննարկումն էր, չնայած մինչև այդ գավառի կուսակցական կազմակերպությունների զգալի մասն արդեն ծանոթացել էր համապատասխան որոշումներին։ Դիլիջանի գավառային կոնֆերանսը անվերապահորեն միացավ բոլշևիկների համահայաստանյան առաջին կոնֆերանսի որոշումներին և խնդիր դրեց գավառում զինված ապստամբություն նախապատրաստելու համար գործնական աշխատանքները սկսել։ Քննարկած մյուս հարցերը (ընթացիկ մոմենտ, կազմակերպական հարցեր, ընտրություններ և այլն) և ընդունած որոշումները բխում էին հունվարյան կոնֆերանսի որոշումների ոգուց և նպատակ ունեին մոբիլիզացնել գավառի աշխատավոր մաս-

5 Տե՛ս ՄԼԻ-ի ՀՅԿԱ, ֆ. 32, ց. 1, գ. 32, թթ. 21—25։

սաներին՝ դաշնակցական ռեժիմի դեմ մղվող պայքարը հաղթանակով պսակելու համար[6]։

Կոնֆերանսը ճիշտ բնութագրեց Հայաստանում և, մասնավորապես, գավառում տիրող տնտեսական ու քաղաքական դրությունը, հավանություն տվեց կոմբջիջների կատարած կազմակերպական, քաղաքական ու գաղափարական աշխատանքին, խնդիր դրեց ուժեղացնել նրանց գործունեությունը՝ տեղերն ուղարկելով փորձված կուսակցական աշխատողներ, ստեղծելով նոր կոմբջիջներ և կենտրոնից պահանջելով նոր պրոֆեսիոնալ հեղափոխականներ։ Այնուհետև կոնֆերանսը որոշեց ավելի ուժեղացնել կազմակերպական, քաղաքական, դաղափարական աշխատանքները գավառում, կազմակերպված անցկացնել առաջիկա մայիսյան ցույցերը։ Կոնֆերանսը նաև ընտրեց գավառային կոմիտե, որի կազմում մտան Շ. Ամիրխանյանը, Ե. Մկրտումյանը, Ա. Բերբերյանը, Կ. Այվազյանը և ուրիշներ[7]։

Շուտով կոնֆերանսի աշխատանքի մասին հեկտրոգրաֆով բազմացված թռուցիկներ են տարածվում գավառի գյուղերում ու զինվորների մեջ։ Նորընտիր գավառային կոմիտեն եռանդուն միջոցներ է ձեռնարկում կոնֆերանսի որոշումների մասսայականացման ու կենսագործման ուղղությամբ, որոնք ամենուրեք հավանության են արժանանում, աճում են կուսակցական կազմակերպությունները, արագորեն ավելանում է կոմունիստների և նրանց համակրողների թիվը։ Այդ բոլորին նպաստում էր նշանակալից այն հանգամանքը, որ Ադրբեջանում արդեն սովետական կարգեր էին հաստատվել։ Դա Ղազախ-Շամշադինի աշխատավորության շրջանում առաջ էր բերել հեղափոխական աննախընթաց բուռն ոգևորություն։

Նման պայմաններում ՌԿ(բ)Կ Դիլիջանի գավառային կոմիտեն կրկին համոզմունք է հայտնում, որ զինված ապստամբության միջոցով դաշնակցականների ռեժիմի տապալումը պետք է սկսել Ղազախ-Շամշադինից, քանի որ այն սահմանակից է Սովետական Ադրբեջանին և շփման մեջ է կարմիր բանակի առաջավոր զորամասերի հետ, որոնք անհրաժեշտության դեպքում օգնության կգան։ Այդ մասին հայտնելու միտիայով գավկոմը իր ներկայացուցչին՝ Կ. Այվազյանին ուղարկեց Երևան՝ ՌԿ(բ)Կ Արմենկոմ և անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներ ծավալեց։ Ուժեղացվեցին Իջևանի, Սև քարի, Աչաջրի կոմբջիջները, վերջնականապես ձևավորվեցին Ջարխեջի, Ուզունթալայի և այլ գյուղերի կոմբջիջները։ Այս գյուղերում աչքի ընկնող աշխատանք էին կատարում կոմունիստներ Տիգրան Ղալթախչյանը, Գևորգ Հարությունյանը (Պապաշա, Զինգեր), Գալուստ Հարությունյանը, Հովսեփ Վանունին, Հակոբ Հակոբյանը, Մ. Ղուլյանը և ուրիշներ։ 1920 թ. մայիսի սկզբներին Ղըրզի գյուղում տեղի ունեցավ Շամշադինի շրջանի կուսակցական կոնֆերանս, որը հավանություն տալով գավառային կոնֆերանսի որոշումներին, կոնկրետ միջոցառումներ մշակեց գյուղական կոմբջիջները ամրապնդելու և առաջիկա զինված ապստամբությունը նախապատրաստելու ուղղությամբ։ Այստեղ ընտրվեց ՌԿ(բ)Կ Շամշադինի շրջանային կոմիտե։ Կուսակցական աշխատանքներն

---

6 Տե՛ս «Մայիսյան ապստամբությունը Հայաստանում, 1920—1930» (հիշողությունների և դոկումենտների ժողովածու), Երևան, 1930, էջ 101—105, ՄԼԻ-ի ՀՖԿԱ, ֆ. 32, ց. 1, գ. 6, թ. 1—9, գ. 27, թ. 1—3։

7 Տե՛ս ՄԼԻ-ի ՀՖԿԱ, ֆ. 32, ց. 1, գ. 6, թ. 2—3, գ. 35, թ. 1, նաև՝ ֆ. 4, գ. 5, թ. 4, կապոց 108։

առանձնապես հաջող էին ընթանում շրջանի Ղըրդի (որն ուներ 7 կոմբջիջ՝ 42 անդամով, նրանցից 10-ը՝ կին), Ղուլալի (6 կոմբջիջ՝ 38 անդամով), Զինար (2 կոմբջիջ՝ 18 անդամով), Նորաշեն (3 կոմբջիջ՝ 23 անդամով), Վերին Կարմիր աղբյուր (3 կոմբջիջ՝ 25 անդամով), Մովսես (2 կոմբջիջ՝ 21 անդամով), Թովուզ Կալա (Բերդ, 2 կոմբջիջ՝ 20 անդամով), Թովուզքենդ (3 կոմբջիջ՝ 28 անդամով), Նավուր (2 կոմբջիջ՝ 15 անդամով) և այլ գյուղերում[8]։

Զգալիորեն ամրապնդվեցին գավառի կայազորի ընդհատակյա կոմբջիջները (հատկապես Դիլիջանում գտնվող 6-րդ և Սև քարում ու մի քանի այլ գյուղերում տեղակայված միլիցիոն տերիտորիալ գնդերում)։ Դեպքերը գնալով հասունանում էին[9]։ Մեծ վերելքով տեղի ունեցան մայիսմեկյան քաղաքական ցույցերը, որոնք շուտով վերածվեցին զինված ապստամբության։

Մայիսմեկյան ցույցերն ու միտինգները մեծ հաջողություն ունեցան Դիլիջանի գավառում։ Այստեղ գավառային կոմիտեի նախաձեռնությամբ ստեղծվեց գավառային ռազմահեղափոխական կոմիտե, որի մեջ մտան Շ. Ամիրխանյանը, Հ. Յաղուբյանը, Կ. Այվազյանը, Ե. Մկրտումյանը, Ա. Բերբերյանը. Գ. Հարությունյանը և ուրիշներ։ Քիչ անց հեղկոմներ կազմվեցին նաև Շամշագինում, Դիլիջանում և այլուր։

Գավառում ապստամբության դրոշը առաջինը բարձրացրին Շամշաղինի շրջանի աշխատավորները, մայիսի 14-ին, Հ. Գրիգորյանի, Ա. Շահնազարյանի և ուրիշների գլխավորությամբ։ Գավառային կոմիտեն և գավառային հեղկոմը անմիջապես Շամշադին ուղարկեցին իրենց ներկայացուցիչ Ա. Բերբերյանին[10]։

Գավկոմը և գավառային հեղկոմը միառժամանակ սպասողական դրության մեջ էին։ Նրանք սպասում էին Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեի և կարմիր բանակի օգնությանը։ Շուտով հայտնի դարձավ, որ Ալեքսանդրապոլի, Ղարսի, Քյավթառլուի ապստամբները պարտվել են, մյուս կողմից դեռ լուր չկար 11-րդ կարմիր բանակի հրամանատարության մոտ ուղարկված գավկոմի և գավառային հեղկոմի պատվիրակներից։ Եվ այնուհանդերձ, գավկոմն ու գավառային հեղկոմը որոշեցին զենքի դիմել։ Մայիսի 19-ին Սև քարի, Աչաջրի գյուղացիներն ու տեղի միլիցիոն տերիտորիալ գնդի զինվորները Տիգրան Ղալթախչյանի, Արշակ Բաբասյանի, Նիկոլայ Փիրումյանի, Մելիք Օքմինյանի, Մինաս Ղալումյանի, Գրիգոր Ճաղարյանի, Գրիգոր Փաշինյանի, Սահակ և Լևոն Միրզոյանների ղեկավարությամբ ապստամբեցին և շարժվեցին դեպի Իջևան։ Ապստամբներին միացան նաև տեղի կայազորի զինվորները՝ 6-րդ գնդի բոլշևիկների ղեկավար Սեդրակ Հակորջանյանի գլխավորությամբ։ Նույն օրը ապստամբները գրավեցին Իջևանը և ձերբակալեցին դաշնակցական մինիստրի օգնական Մանասյանին, գեներալ Բաղդասարյանին և ուրիշների, որոնք պատժիչ ջոկատներ ձևավորելու նպատակով եկել էին Իջևան։

Հաջորդ օրը ապստամբների և ողջ աշխատավորության ցնծության պայմաններում Իջևան ժամանեցին կարմիր բանակի օգնական ուժերը (2 հեծյալ գունդ)։ Տեղի ունեցան խանդավառ միտինգներ, որտեղ ելույթներ ունեցան գավառի բոլշևիկների ղեկավարներ Շ. Ամիրխանյանը, Ե. Մկրտումյանը, կար-

---

8 Տե՛ս «Կոմունիստ» (Բաքու), 22 մայիսի 1920, № 4։

9 Տե՛ս «Մայիսյան ապստամբությունը Հայաստանում, 1920—1930», էջ 172—183։

10 Տե՛ս ՄԼԻ-ի ՀՅԿԱ, ֆ. 32, ց. 1, գ. 21, թթ. 6—21։

միր բանակի քաղաշխատողներ և այլն։ Ժողովականներին համակած ցնծությունը վկայությունն էր այն բանի, թե ինչպիսի սիրով ու հուզմունքով էին աշխատավորները սպասում Սովետական Ռուսաստանի փրկարար օգնությանը։ Այդպիսի ոգևորությամբ հաջորդ օրը ապստամբների և կարմիր բանակայինների միացյալ ուժերը ազատագրեցին Դիլիջանը։ Սակայն այդ օրերին մուսավաթական խռովություն սկսվեց Սովետական Ադրբեջանում, և կարմիր բանակի հիշյալ երկու հեծյալ գնդերը ետ կանչվեցին։ Փոփոխված իրադրության մեջ ապըստամբական ջոկատները ևս ետ քաշվեցին Սովետական Ադրբեջանի տերիտորիան։ Նահանջի ժամանակ գերվեց և տանջամահ արվեց Ենոք Մկրտումյանը, զոհվեցին նաև Սեդրակ Հակոբջանյանը, Վասիլի Ալեքսեևը, Վազինակ Հովսեփյանը և ուրիշներ։ Ապստամբները, նահանջելով, Ծուռ կամուրջի մոտ ոչնչացրեցին խմբապետ Մուրադի ջոկատը։

Միայն մուսավաթական խռովության ջախջախումից հետո (1920 թ. հունիսի 20) ապստամբները օժանդակ ուժերով կրկին մտան Իջևան և տապալեցին տեղական իշխանության օրգանները։ Սակայն այս անգամ ևս ուժերը անհավասար էին. ապստամբությունը պարտվեց և ապստամբները կրկին նահանջեցին Սովետական Ադրբեջանի տերիտորիան։ Հուլիսի սկզբներին այստեղ ապստամբների միտինգում ներկայացուցիչներ առանձնացվեցին և ուղարկվեցին Բաքու՝ օգնություն խնդրելու։ Հուլիսի 6-ին միտինգում ընդունված դիմումի տեքստը հրապարակվեց «Կոմունիստ» (Բաքու) թերթում։ Սակայն, փոփոխված ստեղծված իրադրությունից ելնելու, ՀԿԿ արտասահմանյան բյուրոն ու ապստամբների ղեկավարությունը որոշեցին ապստամբությունը չշարունակել։ Գավառի 1500 հոգուց կազմված ապստամբական ջոկատը Ադրբեջանում միացվեց կարմիր բանակի զորամասերին, իսկ քիչ անց նրա հիման վրա ձևավորվեց հայկական ապստամբական գունդը, որը շուտով ակտիվ դեր խաղաց Հայաստանում սովետական կարգեր հաստատելու համար մղված պայքարում։ Դիլիջանի գավառի բոլշևիկները 1920 թ. Բաքվում ակտիվ մասնակցություն ունեցան Արևելքի ժողովուրդների համագումարին[11]։

Այսպիսով, Դիլիջանի գավառային կուսակցական առաջին կոնֆերանսի որոշումների կենսագործման համար տեղի բոլշևիկները և նրանց հազարավոր համակրողները ոչ մի ջանք չխնայեցին։ Կոնֆերանսն ընտրած գավառային կոմիտեն և սրա նախաձեռնությամբ ստեղծված գավհեղկոմն ու տեղական հեղկոմները, գործող կոմբջիջները ամեն ինչ արեցին մայիսյան ցույցերը հաջող անցկացնելու և բռնկված զինված ապստամբությունները հաղթանակով պսակելու համար։ ՌԿ(բ)Կ Դիլիջանի գավառային կոմիտեն ու հեղկոմը կարողացան անհրաժեշտ կապեր ստեղծել Սովետական Ադրբեջանի կառավարության և 11-րդ կարմիր բանակի հրամանատարության հետ և որոշակի օգնություն ստանալ։

1920 թ. աշնանը նոր հզոր թափ ստացան հեղափոխական շարժումները Հայաստանում, հատկապես նրա հյուսիսային շրջաններում։ Նոյեմբերին գա-

---

11 Համագումարին գավառից մասնակցում էին ավելի քան 10 պատվիրակներ, այդ թվում՝ Առաքել Աթաբեկյանը, Տիգրան և Հովսեփ Ղալթախչյանները, Սահակ Միրզոյանը (Աչաջրից), Մելիք Օքմինյանը (Սև քարից), Գրիգոր Աթաբեկյանը (Լալի գյուղից), Արշակ Աթայանը (Բերդ գյուղից), Սարգիս Ավալյանը (Մովսես գյուղից), Հովհաննես Գրիգորյանը և Խաչատուր Հովհաննիսյանը (Ղըրղիից), Հայրապետ Ռուստամյանը և Օսանը (Բոուղից) և ուրիշներ։ (Տե՛ս ՄԼԻ-ի ՀՖԿԱ, ֆ. 32, ց. 1, գ. 15, թ. 9)։

վառի աշխատավորները առաջինը բարձրացրին ապստամբության դրոշը, նրանց հետևեցին Հայաստանի մյուս շրջանների աշխատավորները, որոնք կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, ռուս մեծ ժողովրդի, 11-րդ կարմիր բանակի օգնությամբ տապալեցին դաշնակցականների լուծը և հաստատեցին սովետական իշխանություն։

ՌԿ(բ)Կ Դիլիջանի գավառային կազմակերպության առաջին կոնֆերանսը, որը տեղի ունեցավ Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների անդրանիկ անլեգալ կոնֆերանսից հետո, հանրապետությունում օրավուր աշխուժացող ու ծավալվող կոմունիստական շարժման և մասսաների մեջ մարքսիստական-լենինյան գաղափարների տարածման ու դրանց կենսագործման համար մղված պայքարի ցայտուն դրսևորումներից մեկն էր։ Նրա քննած հարցերն ու աշխատանքի արդյունքները վկայում են, թե հասունացող հեղափոխական իրադրության և համազգային ճգնաժամի պայմաններում Հայաստանի բոլշևիկները ինչպիսի խնամքով էին պատրաստվում դաշնակցականների ու նրանց օտարերկրյա իմպերիալիստական տերերի ռեժիմը տապալելու համար։

ИЗ ИСТОРИИ ДИЛИЖАНСКОЙ УЕЗДНОЙ ОРГАНИЗАЦИИ РКП(б)

В. Н. НЕРКАРАРЯН
Доктор исторических наук

Резюме

Дилижанская уездная организация РКП(б) являлась одной из передовых отрядов коммунистических организаций Армении в 1920 г. Первая ее конференция (25 апреля 1920 г.) состоялась после первой конференции большевиков Армении, принявшей курс вооруженного восстания против режима дашнаков и их зарубежных хозяев.

Дилижанская уездная конференция большевиков явилась знаменательным событием в политической жизни республики. Горячо одобрив курс на вооруженное восстание, конференция избрала уездный комитет партии и поручила ему перестроить всю свою работу в духе выполнения этой главной задачи. Конференция наметила также меры по подготовке и проведению первомайского праздника с целью мобилизовать массы и теснее сплотить их вокруг партии большевиков. Вскоре, создав уездный военный революционный комитет, Дилижанский уездный комитет РКП (б) совместно с последним достойно организовал и провел майские политические демонстрации и вооруженное восстание трудящихся уезда.